# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ -2025/3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 16 | ՀՀ Առողջապահության նախարարի 12.02.2024թ. N 50-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Աշխատանքային կենտրոնը պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի ողորկ, առանց ծլեպների և արտադրական խոտանների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները պետք է լինեն հարթ և անվտանգ, անհրաժեշտության դեպքում՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներով: Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի հարմարավետ ըստ նպատակային նշանակության շահագործման ժամանակ: Աշխատանքային կենտրոնը պատրաստված է 18 մմ հաստությամբ լամինացված E0դասի ՓՏՍ-ից, արտաքինչափսերն են՝ 2500 x 450 x 1500 մմ ( L x Խ x Բ): Աշխատանքային կենտրոնը հորիզոնական դիրքով բաժանված է երեք հավասարաչափ բաց 2 և փակ 1 դարակներից: Բոլոր անկյունները լինեն կլորացված կամ անկյուններին ամրացված լինենպոլիմերային կլորացված հատուկ դետալներ: Հետնապատը պետք է լինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթեփային սալից(ԴՎՊ), նույն E0դասի ՓՏՍ-ի գույնի:Պահարանը ամբողջ պարագծով պետք է ունենա շրջանակածև ոտքեր, որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի |

| | |
|---|---|
| | տակդիրներ՝ 8 մմ հաստությամբ: Ոտքերը պետք է լինեն կարգավորվող:Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 2200x450 x 100 մմ ( L x Խ x Բ), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պոլիմերային մուգ գույնի տակդիրներ,որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8 մմ է:Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Գույները նախապես համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ:Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում): |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ГРОСС ГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ -2025/3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 16 | |